Նախագահը վերկացաւ և առանց մի բառ ասելու տխուր դէմքով ցոյց տուեց նորան կատարելապէս լցված խորհրդաւոր գաւաթը: Դօկտորը սորանից իմացաւ, որ Ակադէմիայի մէջ այլ ևս տեղ չկար, բայց առանց վհատելու նա կամեցաւ իմացնել, որ նշանակված թւից աւելորդ մի ակադէմեանը ոչինչ խանգարելու չէր այնտեղ: Նա նկատումէ իւր ոտների տակ վարդի տերև, բարձրացնումէ նորան և զգուշութեամբ դնումէ ջրի մակերևոյթի վերա և այս կատարումէ այնչափ արհեստաբար, որ գաւաթից ոչ մի կաթիլ չէ թափվում:

Բարձրաձայն ծափահարութիւններ ձայնակից եղան դօկտորի այս սրամիտ պատասխանին: Այս անգամ օրէնքը լուծվեցաւ, և դօկտոր Զէբ անգամ ընդունվեցաւ միաձայն: Նոյնժամայն բերին նորան մատեան, որի մէջ ընդունվօղներն իւրանք պիտի ստորագրվէին:

Նա ստորագրեց իւր ազգանունը:

Մնումէր միայն քանի մի սովորական շնորհակալութեան խօսքեր ասել: Բայց արդարև Լռիկ ակադէմեան լինելով, դօկտոր Զէբը շնորհակալութիւն մատոյց առանց մի բառ արտասանելու: Թերթի լուսանցի վերա նա գրեց թուանշան հարիւր (100), — այնքան էին նորա նոր ընկերակիցներն, — յետոյ այս թուանշանի առաջ զրօ աւելացնելով (0100) ներքև ստորագրեց. նոքա կամենալու չէին ոչ աւելի ոչ պակաս: Նախագահը համեստ դօկտորին նոյնպէս քաղաքավարի և խելացի կերպով պատասխանեց: Նա աւելացրեց հարիւր թուանշանի առաջ մի (1100), և ստորագրեց. նոքա կամենալու են տասն անգամ աւելի: Ս. Ստեփանէ:

ՀԱՅԵՐԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ ՊԱՐՍԻԿՆԵՐԻ ՀԵՏ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՐՈՒՄՆ.

Հայերի պատմական կեանքի նշանաւոր երևոյթներից մինն՝ է Վարդանեանց պատերազմը հինգերորդ դարում. Հինգերորդ դարը, սիրելի ընթերցող, վերաբերումէ բարբարոսութեան ժամանակամիջոցին երբ Յոյն և Պարսիկ բռնաւոր պետութիւնները արհամարհելով մարդկային իրաւունքների հաւասարութեան վսեմ գաղափարը, անխնայ ճնշումէին իւրեանց ստորադրած ազգերը. սակայն և այնպէս, նա մի փառաւո՛ր դար հանդիսադրվումէ իւր միւս լուսաւոր կողմերով. Քրիստոնէութիւնը հաստատվումէ այդ ժամանակամիջոցում՝ և այդ հաստատման միջնորդութեամբ նա տարածելով իւր կենսատու ճառագայթները դէպ ի զանազան կողմեր, բարձրացնումէ փառաւորապէս իւր յաղթող դրօշը — Փրկչական Խաչը Քրիստոսի, որ արդէն վաղ ժամանակից հետէ գրկած էին Հայերը. Հայերի պատմական կեանքը ցոյց է տալիս ակն յայտնի՝ որ նորանք հեռի մնալով աշխարհային բազմավրդով աղմուկներից, բազմատեսակ քաղաքական կեանքի խռովութիւններից, իւրեանց միակ մխիթարութիւնը փնտռած են եղել քրիստոնական հոգեկեցոյց վարդապետութիւնների և հոգւոյ անդորրութեան մէջ. Հանգցնումէ իւր մէջ խղճմտանքի ձայնը մի բարբարոս տէրութիւն և զրկումէ հայերին իւրեանց հարազատ վաստակներից, ստացուածներից, և գոյքերից, սակայն դեռ Հայերը ոչինչ յուսահատութեան նշան չեն ցոյց տալի. Ինչի՞. որովհետև նորանք չէին կապուած աշխարհային ունայն և վաղանցիկ փառքերի և վայելչութիւնների հետ. որովհետև նորանց միակ յոյսը և նեցուկը՝ Քրիստոսի Եկեղեցին դեռ անկործան մնացած էր, դեռ ոչինչ վտանգի ենթարկուած չէր. Մի աստուածատուր ահելի պատգամ հնչումէր միշտ նորանց ականջներում. „Ծառա՛յք, հընազանդ լերուք տերանց և թագաւորաց ձերոց, որպէս Աստուծոյ". Այդ պատճառով Հայերը անխտիր ջերմեռանդութեամբ ծառայել են հնազանդութեամբ որ և իցէ տիրապետող իշխանութեան, եթէ վերջինս կամեցած չէր խախտել նո-

րանց հոգեղէն կեանքի էական տարրերը, Նորանց, ազատ հոգիով սնուցանող սուրբ հաւատի հիմները. Հպատակութիւն, խաղաղասիրութիւն կարծես թէ Հայերի բնատուր յատկութիւններ էին դարձած. Նորանք սիրած են եղել միշտ այն թագաւորութիւնը, որի հոգաբարձութեան և իշխանութեան ներքոյ են եղել գտնուած, առանց տըրտնջման և դժգոհութեան Նորանք վճարում էին այն ծանր հարկերը, որ դնում էին Նորանց վերայ տիրապետող բարբարոս թագաւորները. Հայերը պատերազմական հոգի էին ստանում կրօնի վըտանգի ենթարկման դիպուածում. Այս ասութիւններիս զօրաւոր ցոյցը կամ հանդէսը Ներկայացնում է մեզ հինգերորդ դարի այն ականաւոր պատերազմը, որի սրտաշարժ Նկարագրութիւնը տեսնում ենք Եղիշէ վարդապետի պատմութեան մէջ. Ո՞վ չէ կարդացած արդեօք անմահ վարդապետի այս գրուածը, որտեղ գեղեցիկ կերպով երեւում է Հայերի տիրասէր բնաւորութիւնը, գերօրինակ հաստատամտութիւնը աստուածատուր պատուիրանների մէջ և այն դառն չարչարանքները, զորս կրած են խեղճ Հայերը անգութ բարբարոս տիրապետողից. Տեսէք ինչպէս է ասում Այրարատի Յովսէփ եպիսկոպոսը միւս Հայ եպիսկոպոսների և քորեպիսկոպոսների բազմութեան հետ Պարսկական բռնաւոր Յազկերտի համար. „Ի Նախնեաց ունիմք սովորութիւն աստուածատուր պատուիրանաւն աղօթս առնել ի վերայ թագաւորի, և անձանձրոյթ խնդրել յԱստուծոյ վասն երկայն ժամանակաց զորա, զի խաղաղութեամբ վարեսցէ զտիեզերական իշխանութիւնդ. զոր աւանդեալ է դմա յԱստուծոյ, զի ի դորա յերկար խաղաղութեանն և մեք առողջութեամբ և աստուածպաշտութեամբ կատարեսցուք զկեանս մեր . . . . ի հաւատոց մերոց զմեզ ոչ ոք կարէ խախտել, ոչ հրեշտակք և ոչ մարդիկ, ոչ սուր և ոչ հուր, ոչ ջուր, ոչ ամենայն զինչ և են դառն հարուածք. Ամենայն ինչք և ստացուածք մեր ի ձեռս քո, և մարմինք մեր առաջի քո կան, ըստ կամաց քոց արա զինչ և կամիս . . . Մեք ոչ խախտեմք ի մերոյս հաւատոյ. փոխադակի արա ըստ կամեցողութեան քում. ի քէն տանջանք, և ի մէնջ յանձնառութիւնք, սուր քո և պարանոց մեր,,. Հայկազն ընթերցո՛ղ, չես մորմոքվում արդեօք այդ տողերը կարդալիս. կարճ է այդ հատուածը. բայց որպիսի պայծառափայլութեամբ երեւում է Հայերի խաղաղասէր բնաւորութիւնը, և այն պատերազմի պատճառը, որ ունեցան Հայերը Պարսկական հրապաշտ թագաւորի հետ. Յազկերտ կամեցաւ քրիստոնէութիւնը ջնջել մի քաղաքական կարեւոր պատճառով ըսելխաւորապէս, Քաջ հասկանալով թէ Քրիստոնէական կրօնը Հայերի միաւորիչ կապը լինելով Յոյների հետ, նա ստիպեց Հայերին ուրանալ քրիստոնէութեան հաւատը, և ընդունել կրապաշտականը, որանով կարելի էր Հայերին անջատել Յոյներից և միաւորել Պարսկական ազգի հետ. դա էր քաղաքական Նպատակը, որ պատճառ եղաւ Հայերի գերութեան, Նորանց ստացուածների յափշտակութեան, և այլ բազմատեսակ տառապանքների . . . ., որք վսեմ բանաստեղծութեամբ Նկարագրուած են Եղիշեայ վարդապետի պատմական գրութեան մէջ . . . . .

ՄԵԼՔԻՍԵԴԵԿ ՏԷՐ ԳՐԻԳՈՐԵԱՆ ՄՈՒՐԱԴԵԱՆՑ

1871 Երրորդ –ի Երրորդ օր Նոյեմբերի:

ՀԱՅՈՑ ԿԵԱՆՔԻ ՎԵՐԱՅ

ԹԻՒՐ ԿԱՐԾԻՔՆԵՐ

Հայ ազգը իր Ներքին կեանքի կողմից բաւական հետաքրքրելի լինելովը երբեմն շատ սքանչելի գրականական երեւոյթների պատճառ է լինում.

Այդպիսի երեւոյթներից է վերջիններս լոյս եկած «Исторія войско и владичества русскихъ на Кавказѣ*)» անունով ռուսերէն գրուածքի Ա. Հատորի Բրդ գիրքը, որի մէջ Նրա հեղինակ Պ. Դուբրովինը Նկարագրում է Կովկասեան ազգերի կեանքը, որոնց շարքում և Կովկասաբնակ Հայերինը.

Այս գրքի արժանաւորութիւնը գնահատելու և մանաւանդ Հայերի մասին հանդէս բերած տեղե-

*) Т. I. 3ч. Спб. 1871 г. Ц. 7 р. съ пер. 8 р.